

“ԱրմենՏել” ՓԲԸ կողմից բաժանորդին մատուցվող հեռախոսակապի ծառայությունների

Հեռահաղորդակցության օպերատոր “Արմենիա Տելեֆոն Կոմպանի” փակ բաժնետիրական ընկերությունը, որը գործում է համաձայն իրեն տրամադրված թիվ 60 լիցենզիայի, այսուհետ՝ “Օպերատոր”

ի դեմս լիազորված անձ՝ _____, մի կողմից, և մյուս
(անուն, ազգանուն, պաշտոնը)

կողմից “Բաժանորդ” ի դեմս

(պաշտոնը, անուն, ազգանուն կամ քաղաքացու անուն, ազգանուն)

(իրավաբանական անձի հասցեն, քաղաքացու գրանցման վայրի հասցեն)

կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

“Օպերատորը” պարտավորվում է ամրակցված հեռախոսային ցանցի իր “Բաժանորդին”

(տեղադրման հասցե)

հասկացված հեռախոսագծով (հեռախոսագծերով)

(ըստ հավելվածի՝ հեռախոսի համար, կապուղիներ, միացնող գիծ, ուղիղ գիծ, ISDN ցանցային տերմինալ՝ NETMOD սարքավորում, CDMA համակարգով հեռախոսագծի բաժանորդային տերմինալ, անտենա և այլ կապի միջոցներ)
մատուցել հեռախոսակապի ծառայություններ՝ ըստ Բաժանորդի կողմից ընտրած տարիֆային պլանի իսկ “Բաժանորդը” պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում վճարել մատուցված հեռախոսային ծառայությունների համար:

2. Վճարման կարգը և ժամկետները

2.1 Բաժանորդին հեռախոսակապի ծառայությունները մատուցվում են սահմանված կարգով՝ հաստատված սակագներով՝ համաձայն Բաժանորդի կողմից ընտրած սակագնային փաթեթի՝

(սակագնային փաթեթի անվանումը)

2.2. “Բաժանորդը” մատուցված հեռախոսակապի ծառայությունների հաշիվները կարող է ստանալ Օպերատորի սպասարկման կետերում և/կամ էլեկտրոնային փոստով՝ հաշվետու ամսվան հաջորդող մինչև ամսի 10-ը:

Վճարման ենթակա գումարի մասին տեղեկատվություն Բաժանորդը կարող է ստանալ այդ նպատակով առանձնացված հեռախոսահամարով: Հետագայում, տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում բաժանորդին հաշիվները կարող են տրամադրվել նաև այլ եղանակներով:

2.3. Մատուցված հեռախոսակապի ծառայությունների դիմաց վճարումը կատարվում է ըստ հաշվի(ների), “Օպերատոր” գործառնական դրամարկղներում, Հայփոստի, և ՀՀ բանկերի բաժանմունքներում (որոնց հետ կնքված են պայմանագրեր), կանխիկ վճարումներ ընդունող տերմինալներում կամ այլ վճարման միջոցներով, ինչպես նաև “Օպերատոր” հաշվարկային հաշվին վճարումներ կատարելու միջոցով:

2.4. “Օպերատորի” կողմից մատուցված հեռախոսակապի ծառայությունների դիմաց հաշվարկված գումարները “Բաժանորդը” պարտավոր է վճարել մինչև հաշվարկային ամսվան հաջորդող ամսվա վերջին օրը ներառյալ:

2.5. Մատուցված Ծառայությունների ծավալը որոշվում է Օպերատորի բիլինգային համակարգի գրանցումների հիման վրա: Նշված գրանցումները/տվյալները հանդիսանում են Բաժանորդին մատուցվող Ծառայությունների և դրանց ծավալների մասին անժխտելի ապացույց:

3. “Օպերատորի” պարտականությունները և իրավունքները

3.1 “Օպերատոր” պարտավոր է՝

3.1.1 Ելնելով գործող տեխնիկական և տեխնոլոգիական հնարավորություններից ապահովել կայուն և անխափան հեռախոսակապի ծառայություններ:

3.1.2 Իր ցանցի սահմաններում ապահովել հեռախոսային խոսակցությունների զաղտնիությունը:

3.1.3 Մեփական նախաձեռնությամբ կամ “Բաժանորդի” հայտով վերացնել առաջացած կայանային և գծակաբեկային վնասվածքները Հեռախոսակապի ծառայությունների մատուցման Կանոններով սահմանված ժամկետներում:

3.1.4 Ոչ “Բաժանորդի” մեղքով հեռախոսագծերի վնասվածքների, հեռախոսացանցերում տեղի ունեցած վթարների դեպքերում ամրագրել խափանման օրը, ժամը և այն վերականգնել Հեռախոսակապի ծառայությունների մատուցման կանոններով սահմանված ժամկետներում:

3.1.5 Ապահովել ՀՇԿՀ կողմից կարգավորման ենթակա հեռախոսակապի ծառայությունների սակագների բարձրացման մասին հրապարակային տեղեկատվությունը Հեռախոսակապի ծառայությունների մատուցման կանոններով սահմանված ժամկետներում, իսկ այդ սակագների նվազեցման մասին՝ ոչ ուշ, քան այն կիրառելու օրվանից 3 (երեք) օր առաջ:

3.2 “Օպերատորը” իրավունք ունի՝

3.2.1 Անջատել Բաժանորդային հեռախոսագիծը (գծերը) հաշվարկային ժամանակահատվածին հաջորդող ամսվա մինչև վերջին օրը ներառյալ, Օպերատորի կողմից այլ պայմանագրերով բաժանորդին մատուցվող էլեկտրոնային հաղորդակցության ծառայություններից ցանկացածի դիմաց վճարումները չկատարելու կամ սույն պայմանագրի պայմանները խախտելու կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ դեպքերում: Հաշվարկային ժամանակահատվածին հաջորդող 2-րդ ամսվա ընթացքում հեռախոսակապի ծառայությունների առկա պարտքերի մարման դեպքում անջատված հեռախոսագծերը ենթակա են վերամիացման:

3.2.2 Հանել սույն պայմանագրի 3.2.1 կետով սահմանված ժամկետում անջատված հեռախոսագծերը, հաշվարկային ժամանակահատվածին հաջորդող 3-րդ ամսվա մինչև վերջին օրը ներառյալ հեռախոսակապի ծառայությունների դիմաց պարտքերը չվճարելու դեպքում և դադարեցնել պայմանագրի գործողությունը՝ հանման օրվանից սկսած երեք ամսվա ընթացքում պահպանելով տեխնիկական տվյալները և վերականգման հնարավորությունը:

3.2.3 Հեռախոսահամարի հանման օրվանից 3 (երեք) ամսվա ընթացքում, “Բաժանորդի” կողմից պարտքերը չմարելու և վերականգման միանվագ ծառայության վարձը չմուծելու դեպքում, հեռախոսակապի ծառայությունների մատուցումը (նոր տեղադրում) իրականացվում է ընդհանուր հիմունքներով՝ հեռախոսակապի ծառայությունների դիմաց նախկին պարտքերը մարելու պայմանով:

3.2.4 Մինչև պայմանագրի դադարեցումը հաշվարկել և գանձել բաժանորդային վարձը:

3.2.5 Անմիջապես անջատել բաժանորդային հեռախոսահամարը (գծերը) և լուծել սույն պայմանագիրը, եթե

- “Բաժանորդին” տրամադրված հեռախոսագիծը (գծերը), առանց լիազորված մարմնի լիցենզիայի և առանց “Օպերատոր” հետ նախնական գրավոր համաձայնեցման օգտագործվում է շահույթ ստանալու նպատակով կամ
- “Բաժանորդին” տրամադրված հեռախոսագիծը (գծերը), առանց “Օպերատորի” հետ նախնական գրավոր համաձայնեցման տրամադրվել են այլ անձի.
- “Բաժանորդը” հանրային հեռախոսացանցին է միացրել չսերտիֆիկացված վերջնակետային սարքավորում կամ այնպիսի վերջնակետային սարքավորում, որը համատեղելի չէ կամ միջամտում է հանրային հեռախոսացանցի աշխատանքին կամ հեռախոսակապի ծառայություններից օգտվելու՝ ուրիշների հնարավորությանը:
- “Օպերատորի” քննարկմանն է ներկայացվել սույն պայմանագրով հեռախոսաֆիկացված տարածքի հանդեպ իրավունքներ ունեցող անձի հայտը՝ այդ տարածքում հեռախոսային գիծ տեղադրելու վերաբերյալ, եթե “Բաժանորդին” այդ իրավունքները չեն պատկանում:

4. “Բաժանորդի” պարտականությունները և իրավունքները

4.1 “Բաժանորդը” պարտավոր է՝

4.1.1 Մատուցված հեռախոսակապի ծառայությունների համար վճարումները կատարել լրիվ ծավալով, յուրաքանչյուր հաշվետու ամսվան հաջորդող ամսվա մինչև վերջին օրը ներառյալ:

4.1.2. “Օպերատորին” տեղեկացնել բաժանորդային սարքավորման տեսակի (ձևի) մասին և դրանք պահպանել սարքին վիճակում:

4.1.3 Կապի որոշ ծառայություններից (VAS) օգտվելու դեպքում ծառայությունների օգտագործման հատուկ պայմանների մասին Բաժանորդը կարող է տեղեկացվել կապը սկսվելու պահին: Կապի շարունակելուն ուղղված Բաժանորդի հետագա գործողությունները համարվում են տվյալ պայմաններն ընդունելու՝ վերջինիս անվերապահ համաձայնություն: Ծառայությունների մատուցման պայմանների հետ համաձայն չլինելու դեպքում Բաժանորդը պետք է դադարեցնի կապը:

4.1.4. Պայմանագրում նշված հեռախոսաֆիկացված տարածքի նկատմամբ իրավունք ունեցող անձի (քաղաքացի կամ կազմակերպություն) փոփոխության, կամ բաժանորդի անվան, անձնագրային տվյալների, բնակության, գտնվելու վայրի և այլ փոփոխությունների դեպքերում գրավոր տեղյակ պահել “Օպերատորին” նման փոփոխությունները ուժի մեջ մտնելու օրվանից սկսած 30-օրյա ժամկետում՝ պայմանագիրը վերաձևակերպելու համար:

Բաժանորդ-իրավաբանական անձը պարտավորվում է տեղեկացնել Օպերատորին՝ իր հանդեպ անվճարունակության վարույթ հարուցելու կամ իրավաբանական անձի կամավոր լուծարման մասին որոշում կայացնելու վերաբերյալ՝ նշված իրադարձության մասին հայտնի դառնալու օրվանից սկսած՝ 3 օրացուցային օրվա ընթացքում:

4.1.5. Վճարել մատուցված հեռախոսակապի ծառայությունների համար նաև այն դեպքում, երբ բաժանորդային (վերջնային) սարքավորումը օգտագործվել է այլ անձանց կողմից, անկախ այն բանից համաձայնեցվել է “Բաժանորդի” հետ, թե ոչ:

4.1.6. ISDN գծերով, CDMA հեռախոսագծերով մատուցվող ծառայություններից հրաժարվելու կամ “Օպերատորի” նախաձեռնությամբ հեռախոսակապի ծառայությունների մատուցման պայմանագրի դադարեցման դեպքերում սարքին վիճակում ետ վերադարձնել “Օպերատորի” սեփականությունը հանդիսացող ցանցային տերմինալ՝ NETMOD սարքավորումը (ներք) CDMA համակարգով հեռախոսագծի բաժանորդային տերմինալը, անտենան կամ “Օպերատորի” սեփականություն հանդիսացող կապի այլ միջոցները:

4.1.7. Չփոխանցել սույն պայմանագրի 1-ին բաժնում նշված կապի միջոցները այլ անձանց (վարձակալության, ենթավարձակալության պայմանագրերով):

4.1.8. Կատարել ՀՀ օրենսդրության և սույն պայմանագրի բոլոր պահանջները:

4.2 “Բաժանորդն” իրավունք ունի՝

4.2.1 Օգտվելու ՀՀ օրենքներով և այլ իրավական ակտերով հեռախոսակապի ծառայությունների ոլորտում սահմանված արտոնություններից:

4.2.2. ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում պահանջելու հեռախոսակապի ծառայությունների վճարման վերահաշվարկ կամ այդ ծառայություններից հետագայում չօգտվելու դեպքում՝ վճարված դրամական միջոցների վերադարձ.

4.2.3 Ծառայությունների մատուցման ընթացքում “Օպերատորի” մեղքով առաջացած թերություններ հայտնաբերելիս պահանջել հեռախոսակապի ծառայությունների խախտումների անհատույց վերացում

4.2.4. “Բաժանորդն” ունի ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ իրավունքներ և պարտականություններ:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. “Օպերատորը” օրենսդրությամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով պատասխանատվություն է կրում “Բաժանորդի” հանդեպ պայմանագրային պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, հեռախոսակապի խափանումները վերացնելու ժամկետները խախտելու համար:

5.2. “Բաժանորդը” պատասխանատվություն է կրում իր մեղքով ցանցային տերմինալ NETMOD սարքավորման, CDMA համակարգով հեռախոսագծի բաժանորդային տերմինալի, անտենայի կամ

Օպերատորի սեփականությունը հանդիսացող այլ սարքավորումները վնասելու կամ կորստի դեպքում՝ դրա արժեքի չափով՝ հաշվի առնելով մաշվածությունը:

5.3. “Օպերատորը” պատասխանատվություն չի կրում սույն պայմանագրի 3.1.5 կետով սահմանված ժամկետների խախտման համար, եթե դրա կատարման անհնարինությունն առաջացել է ոչ իր մեղքով:

5.4. Կողմերը պատասխանատվություն չեն կրում պայմանագրային պարտավորությունները չկատարելու համար եթե դրանք հետևանք են անկանխատեսելի հանգամանքների (բնական աղետներ, պատերազմներ, ՀՀ նախագահի հրամանագրեր և ՀՀ կառավարության որոշումներ և այլն): Նման դեպքերից որևէ մեկի վրա հասնելու դեպքում, Կողմերն այդ մասին պետք է անմիջապես տեղեկացնեն միմյանց: Եթե անկանխատեսելի հանգամանքների ազդեցությունը շարունակվում է երեք ամսից ավել, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին ծանուցելով մյուս կողմին:

5.5. “Օպերատորը” պատասխանատվություն չի կրում բաժանորդային (վերջնակետային) սարքավորումների անսարքությունների կամ չսերտիֆիկացված վերջնային սարքավորումների օգտագործման հետևանքով հեռախոսակապի խափանումների համար: Չսերտիֆիկացված վերջնակետային սարքավորումների օգտագործման իրավական հետևանքների համար պատասխանատվությունը կրում է բաժանորդը:

5.6. Բաժանորդը պատասխանատվություն է կրում բոլոր այն ֆինանսական և այլ ռիսկերի համար, որոնք կապված են Ինտերնետ ցանցում տեղադրված նյութերը, տեղեկատվությունը, ծառայությունները և ապրանքները/արտադրանքները օգտագործելու արդյունքում ծագած հետևանքների հետ: Բաժանորդի չիմացությունը կամ մոլորությունը չի ազատում նրան սույն կետում նշված պատասխանատվությունից:

5.7. Սույն պայմանագրով նախատեսված դրույթները խախտող Կողմը պատասխանատվություն է կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.8. Հեռախոսակապի ծառայությունների մատուցման ընթացքում “Օպերատորի” և “Բաժանորդի” միջև առաջացած վեճերն ու տարաձայնությունները կարգավորվում են բանակցությունների միջոցով, իսկ վերջիններիս անարդյունավետության դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.9. Բաժանորդի կողմից սույն պայմանագրից առաջացած դրամային պարտավորությունները սահմանված կարգով և ժամկետներում չկատարելու դեպքում Օպերատորն իրավունք ունի Բաժանորդի պարտքերը բռնագանձելու ուղղությամբ ձեռնարկել ՀՀ օրենսդրությամբ նախատեսված միջոցները, ներառյալ դիմել դատարան՝ գումարի բռնագանձման պահանջով: Օպերատորն իրավունք ունի սույն կետում նշված պահանջի իրավունքը զիջել կամ իրավունքի իրագործումը հանձնարարել երրորդ անձանց: Ընդ որում, սույն Պայմանագիրը կնքելով, Բաժանորդը ընդունում և համաձայնվում է, որ պահանջի իրավունքը զիջելու կամ իրավունքի իրագործումը երրորդ անձանց հանձնարարելու դեպքում Օպերատորը կփոխանցի պահանջի իրավունքը հաստատող փաստաթղթերը և կհաղորդի պահանջի իրականացման համար նշանակություն ունեցող Բաժանորդին վերաբերող այլ ցանկացած տեղեկությունները /ներառյալ անձնական տվյալներ/ երրորդ անձանց, ի օգուտ որոնց զիջվել է պահանջի իրավունքը և/կամ հանձնարարվել է իրավունքի իրագործումը:

6. Բաժանորդի տեղեկությունների գաղտնիությունը և անձնական տվյալների պաշտպանությունը

6.1. Օպերատորը պարտավորվում է ձեռնարկել բոլոր միջոցները սույն պայմանագրի շրջանակում Բաժանորդի կողմից օգտագործվող ծառայությունների տեսակի, վայրի, նպատակի, նպատակակետի, քանակի և տեխնիկական պայմանների վերաբերյալ այլ տեղեկությունները համարել և պահել գաղտնի: Օպերատորը իրավասու է բացահայտել այդ տեղեկությունները օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:

6.2. Սույն պայմանագիրը կնքելով Բաժանորդը տալիս է իր համաձայնությունը Պայմանագրով նախատեսված ծառայությունները մատուցելու նպատակով Օպերատորի կողմից իր անձնական տվյալները մշակելու, օգտագործելու, ինչպես նաև դրանք և սույն պայմանագրի 6.1 կետում նշված տվյալները երրորդ անձանց /ներառյալ՝ այլ երկրներ/ փոխանցելու վերաբերյալ: Սույն պայմանագիրը կնքելով Բաժանորդը հավաստում է, որ Օպերատորի կողմից ծանուցված է Բաժանորդի անձնական տվյալները մշակելու Օպերատորի մտադրության, մշակման իրավական

հիմքերի, նպատակի ինչպես նաև “Անձնական տվյալների պաշտպանության մասին” ՀՀ օրենքով նախատեսված ծանուցմանը վերաբերող այլ տեղեկությունների մասին:

6.3. Սույն Պայմանագիրը կնքելով Բաժանորդը տեղեկացվում է, որ Օպերատորը կարող է ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով վարկային բյուրոներին տրամադրել Բաժանորդի կողմից օգտագործված ծառայությունների դիմաց վճարումների, պարտքերի, վճարումների սովորությունների կամ պարտավորությունների կամ դրանց կատարման մասին տեղեկություններ:

Օպերատորը պատասխանատվություն չի կրում սույն կետում նշված տեղեկությունների բացահայտման հետևանքով պատճառված որևէ վնասի իրավական հետևանքի համար:

6.4. Սույն Պայմանագիրը կնքելով Բաժանորդը տալիս է իր համաձայնությունը Օպերատորի կողմից AVR հաղորդագրությունների, և/կամ զանգերի միջոցով, ինչպես նաև այլ եղանակներով սույն պայմանագրին առնչվող տեղեկություններ կամ այլ բնույթի ծանուցումներ ստանալու մասին:

6.5. Սույնով բաժանորդը համաձայնվում է, որ իր հեռախոսահամարը կարող է օգտագործվել նաև երրորդ անձանց կողմից ուղղակի մարքեթինգային նպատակով անմիջականորեն կամ միջնորդավորված եղանակով, որը կարող է արտահայտվել գովազդային բնույթի առաջարկությունների, AVR հաղորդագրությունների ստացման, սոցիալական հարցումների ձևով:

6.6. Բաժանորդը իրավունք ունի ցանկացած ժամանակ հրաժարվել 6.5 կետում նշված համաձայնությունից՝ այդ մասին Օպերատորին գրավոր կամ Օպերատորի կողմից սահմանված այլ ձևով իր կամարտահայտումը հասցնելու միջոցով:

6.7 Օպերատորի կողմից կձեռնարկվեն կազմակերպչական, տեխնիկական, ծրագրային միջոցներ սույն պայմանագրի 6.6 կետի ապահովման ուղղությամբ:

7. Այլ պայմաններ և դրույթներ

71. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում երկկողմանի ստորագրման կամ եթե Բաժանորդն արդեն իսկ ունի Օպերատորի հետ նախկինում կնքված պայմանագիր կամ օգտվում է Օպերատորի կողմից մատուցվող ծառայություններից՝ ընկերության ինտերնետային կայքում կամ զանգվածային լրատվության միջոցներում այն հրապարակվելու պահից և ուժի մեջ է մնում այնքան ժամանակ, քանի դեռ Կողմերից մեկը գրավոր չի հայտնել այն դադարեցնելու մասին: Ընդ որում, պայմանագիրը դադարեցնելու համար “Բաժանորդը” կարող է դիմել ցանկացած ժամանակ՝ այդ մասին “Օպերատորին” նախապես տեղեկացնելու և փաստացի ստացված ծառայությունների դիմաց վճարումները կատարելու դեպքում, իսկ “Օպերատոր” միայն սույն պայմանագրով, Կանոններով և օրենքով սահմանված այլ դեպքերում և պայմաններով, ինչպես նաև սույն պայմանագրի, Կանոնների պայմանները և ՀՀ գործող օրենսդրության պահանջները “Բաժանորդի” կողմից խախտելու դեպքում:

7.2. Սույն պայմանագրի առարկայի շուրջ Կողմերի միջև փաստացի ծագած հարաբերություններից կամ նախկինում կնքված համապատասխան պայմանագրից (երից), բխող ֆինանսական պարտավորությունների կատարումը Կողմերի համար պարտադիր են սույն պայմանագրի շրջանակներում:

8. Կողմերի իրավաբանական հասցեները

“Օպերատոր”
պաշտոն, անուն, ազգանուն

Ահարոնյան 2
հասցե, հեռախոս

ՀայԷկոնոմԲանկ 163004038879 հ/հ
բանկային ռեկվիզիտներ

ստորագրություն Կ.Տ

“Բաժանորդ”
քաղաքացի _____

(հասցե, անուն, ազգանուն)
Անձը հաստատող փաստաթղթի տվյալները

իրավաբանական _____ անձ,

իրավաբանական և գործունեության հասցե հարկ
վճարողի հաշվառման համարը

հաշվի _____ առաքման _____ հասցե
..... (“ԱրմենՏել” ՓԲԸ
համապատասխան հնարավորության
առկայության դեպքում)

առձեռն, բաժանորդների սպասարկման
կետում Էլ. փոստի հասցեն _____

կոնտակտային հեռախոս
ստորագրություն Կ.Տ